ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Republic of Armenia, Yerevan Municipality
Yerevan Scientific Medical Center

Республика Армения, Мэрия г. Еревана
Ереван Научно-медицинский центр

28.03.2024թ.

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ N 24/1

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Իվաֆարմ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 08625799, գործունեության հասցե՝ ք. Երևան, Գ. Շերամի 92/3 / խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, այն է՝ «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «Իվաֆարմ» ՍՊԸ-ի հայտում բացակայել է «Հավելված 1.1»-ը, որը տրվել է շտկման, սակայն մասնակցի կողմից ներկայացված շտկված «Հավելված 1.1»-ում չի ներկայացվել 21 և 23 չափաբաժինները: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով, 09.02.2024 թվականին կայացած նիստում, մասնակցի հայտը տվյալ չափաբաժիններով գնահատել է անբավարար և մերժել է:

ԵԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով գնման ընթացակարգի կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 19.03.2024 թվականին:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով. «Իվաֆարմ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Հ. ԲԱԼՅԱՆ

Հր.Ներսիսյան 7 Հեռ. (010) 20-70-07
Պ. Սևակ 5 Հեռ. (010) 28-85-50 info@yerevanmc.am